ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Նախագիծը մշակվել է Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան: Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամասի 8-րդ շենքի 2-րդ բնակարանի բնակիչ Արսեն Ռոբերտի Սաֆարյանին պատկանող, Չարենցավան համայնքում հաշվառված SUBARU FORESTER 2.5 մակնիշի 18OL769 պետհամարանիշի փոխադրամիջոցը համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ուղտասար համայնքի ղեկավար Մ. Պետրոսյանի 2021 թվականի հունվարի 25-ի համար 79 տեղեկանքի շահագործել է Դավիթ Շամիրի Աղաջանյանի կողմից և մնացել է Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Ուղտասար համայնքում:

Համաձայն հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ: Սույն մասին համապատասխան՝ համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը: Համայնքի ավագանու կողմից փոխադրամիջոցների գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում»:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանք՝ առաջարկվում է արտոնություն սահմանել Արսեն Ռոբերտի Սաֆարյանին պատկանող SUBARU FORESTER 2.5 մակնիշի 18OL769 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի գծով՝ ***153 220 ՀՀ դրամի նկատմամբ***, որից ապառքը՝ 71 770 ՀՀ դրամ, տույժը՝ 81 450 ՀՀ դրամ:

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին ավագանու նախագծի ընդունմամբ Չարենցավան համայնքի բյուջեում փոփոխություններ չեն նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ